



6. ԽՈԶԱՐԱԾ

Կար չկար, ժամանակով մի թագավոր կար: Էդ թագավորը շատ զոռքա թագավոր էր և մշտական էթում էր ավլուշ անելու: Մի օր շատ ման էկավ մեջեն, պատահեց մի ջանավարի: Էդ ջանավարը արեգակի դայդա պսպղում էր:

Թագավորը հրամայեց վեզրին, թե.— Մի հնար գտի, բռնենք, ափսո՞ս ա, չըպանենք:

Բերին տուզաղ¹ դրին, բռնեցին, վե կալան բերին ամարաթ:

Թագավորը հրամայեց, թե.— Մի շուշաբանդ օթախ սարքե՛ք, դնենք մեջը, որ գալողը թամաշ անի:

Օթախը շինեցին, դրին մեջը, աշխարքն էկավ թամաշա: Տե-նողը զարմանում, արմանում էր:

Թագավորին ոմեր մի մինումար տղա: Երոր տղեն դառավ տապնիրեք տարեկան, նետվանեղն առավ, էթում էր ավի: Մեկ օր բիրդան նետվանեղը քցելուն պես նետը շուշեն ջարդեց, ընկավ ջանավարի առաջը:

Տղեն էկավ ջանավարից խնդրվեց, թե.— Տո՛ւ իմ նետը:

Ջանավարն ասեց.— Գնա՛ հորդ բարձի տակիցը բալանիքը հանա, բե՛; հա՛մ նետդ վե կալ, հա՛մ էլ ինձ բրախա՛, էթամ, մեղք եմ, ես քու լավությունի տակից դուս կգամ:

¹ Թակարդ (Ս. Բ.):

— Բա՛ որ իմ հերը ինձ սըպանի:

Ասեց.— Զի՛ սըպանի, դու մինումար տղա ես:

Տղեն զնաց, բալանիթը վե կալավ, էկավ, գուռը բաց արեց, շանավարն ասեց.— Թե որ քու հերը քեզ նեղացնի, ա՛րի ինձ դոփի, ես մեշի մեշը, աղբրի կշտին կըլնեմ:

Ասեց ու փախավ զնաց:

Թագավորը որ իմացավ տղեն շանավարին բրախել ա, ասեց.—

Գլուխը կտրե՛ք:

Նազիր-վեզիրը խնդրեցին, թե.— Դո՛ւ ես, մինումար մի տղա, մի շանավարի հըմար խի՛ ես սըպանում, տանից գուս ա՛րա, թո՛ղ էթա:

Թագավորը կանչեց վեզրի տղին, հանեց մի բոլ փող տվեց ճամփի ծախս, ասեց.— Ա՛ռ, էս տղին հետդ տա՛ր, կսըպանեմ՝ դո՛ւ գիտաս, սազ կթողաս՝ դո՛ւ գիտաս, էլ իմ երկիրը ոտ շպըտի դնի: Վեզրի տղեն թագավորի տղի հետ վե կացան գնացին:

Եատ զնացին, թիշ գնացին, հասան մեշեն, ըստեղ վեզրի տղեն ասեց.— Պտի սըպանեմ ըստեղ:

Թագավորի տղեն շատ լաց էլավ, մոմնաթ արեց, որ շոք-պանի:

Վեզրի տղեն ասեց.— Կոիդ բազմանդը ո՛ր տաս ինձ՝ շեմ սը-պանի:

Ասեց.— Ա՛ռ բազմանդը, շեմ ուզում, քե՛ղ ըլնի:

Երոր վեզրի տղեն բազմանդը առավ, ասեց.— Էսօրվանից թա-գավորի տղեն ես եմ; դու իմ գյաղեն ես:

— Գյաղեղ եմ, գյաղեղ եմ, ճա՛րս ինչ:

Ծտեղ ծառի տակին վեզրի տղեն քնեց: Թագավորի տղեն գնաց ման դալու Ման գալով, ման գալով զնաց աղբրի կուշտը, տեհավ շանավարը ըստեղ նստած ա: Լաց էլավ, իրա զլսի էկածը պատմեց շանավարին:

Զանավարն ասեց.— Բա՛ն չկա, ես քեզ ընենց կանեմ, որ դու շատ լավ կապրես: Գնա էդ աղբրի շրիցը խմա:

Տղեն զնաց խմեց:

— էդ ծառը մի թափ տո՛ւ, — ասեց շանավարը:

Տղեն թափ տվեց, քոքը հան էլավ:

Ասեց.— Գնա՛, մեկ էլ շուր խմա:

Խմեց, էկավ:

Ասեց.— Էդ մենծ ծառը թափ տո՛ւ տենանք:
Թափ տալուն պես քոքիցը հանեց:
Ասեց.— Էդ ուժը բոլ ա քե՞զ, թե էլ տամ:
Ասեց.— Զէ՛, մի քիշ էլ ըլնի, դհա՛ լավ կըլնի:
Ասեց.— Գնա՛ էլի ջուր խմա:
Գնաց խմեց. էկավ էրկու էն ծառի հաստությունից ծառ էլի
թափ տվեց ու քոքընան արեց:
Ասեց.— Բո՞լ ա:
Ասեց.— Բո՞լ ա, շնորհակալ եմ:
Տղեն թողաց, գնաց վեզրի տղի կուշտը, ճամփա ընկան գնա-
ցին. Շատ գնացին, թիշ գնացին, հասան մի թագավորի քաղաք:
Վեզրի տղեն խարար զրկեց թագավորին, թե ես ֆլա՛ն թագա-
վորի տղեն եմ, գալիս եմ տեսություն:
Թագավորը մարդ զրկեց, պատվով ընդունեց:
Թագավորը շատ հավանեց էս էրկու տղին էլ, ասեց.— Դու իմ
փեսացուն ես, իմ աղջիկը ես պտի տամ քեզ: Քու նոքարին ի՞նչ
գործի դնենք:
Վեզրի տղեն ասեց.— Դո՞ւ գիտաս, ինչ գործի կդնես՝ դի՛:
Թագավորն ասեց.— Կէթա՞ս մեր խոզերը պահելու:
Տղեն ասեց.— Կէթա՞մ:
Գնաց խոզանոցը, տարավ խոզերը արածացնելու: Երոր իրի-
կունն էկավ, խոզերը բերեց, տեհավ ըտեղ մի գերան վեր ընկած ա:
Առավոտը էդ գերանը վե կալավ ձեռը, խոզերը քշեց, գնաց: Տա-
րավ մինչանք իրիկուն արածացրեց:
Էգսի օրը գերանն առավ գնաց թագավորի բալկոնին թըրը՝ փ,
թըրը՝ փ տվեց. զարթնեցին, էկան, ասին.— Ի՞նչ ես ուզում:
Ասեց.— Մի շահի տվեք, էթամ պոպոք առնեմ:
Թագավորն ասեց.— Ա՛ս մի մանեթ:
— Ինձ մանեթը հարկավոր չի՛, ես ո՞րդե տանեմ խուրդեմ, ինձ
մի շահի տվեք:
Շահին առավ, գերանովը էս դուքանի դուռը շարդեց, էն դու-
քանի դուռը շարդեց, մի շահու պոպոք առավ, խոզերը տարավ
արածացնելու:
Իրիկունը եղ դառավ էկավ, գնաց թագավորի առաջին կան-
նեց, ասեց.— Ինձ հմար մե կարգին էրկաթե դագանակ շինիլ տու:
Ասեց.— Եքա գերանը ձեռիդ ա, բոլ չի՛:

Ասեց.—Չէ՛, ճիպոտ ա, քսանհինդ փթանոց մի դադանակ շինիլ տու:

Թագավորը խոստացավ, որ շինիլ տա:

Առավոտը էլի էկավ՝ թըրը՝ խկ, թըրը՝ խկ, տվեց գերանով բալ-կոնին:

Երոր դուս էկան, ասեց.—Մի շահի տվե՛ք, պոպոք առնեմ:

Մի շահին տվին, էլի հինգ-տասը դուքանի դուռ շարդելով պոպոք առավ, էկավ խողերն առավ զնաց: Իրիկունը եդ էկավ, զնաց քնեց:

Առավոտը տեհավ իրա էրկաթե դագանակը շինած ա. զնաց վե կալավ, ծանդր ու թեթև արեց, ասեց.—Օ՛հ, էս իմ ուզած դա-գանակն ա, — դրեց ուսին, խողերը վե կալավ զնաց:

Խողերը քշեց տարավ Սև գմի սահմանը: Տեհավ որ մի երա-դարվազա ա, ասեց.—Կարող ա ըստեղ տուն ըլնի, էթամ տենամ ի՞նչ կա:

Մոտացավ, տեհավ դուռը շինած ա, մի թիքա հեռու կաննեց, էդ դագանակով մի էրկու դըրք տվեց, կտորտանքը թուան Արևելք ու Արևմուտք, խողերն արեց նեքսն, տեհավ բաղրախչա, եմիշ, ձմերուկ, ամեն բարելիք կա: Բրախ տվեց խողերին, ինքը զնաց ծառի տակին քնեց:

Ճաշ էր դառն, Սև գմն էկավ. էկավ, տեհավ դարվազեն շարդ ու փշուր ա էլած, խողերը բախչումը եմիշ, ձմերուկ են ուտում, քանդըրտել են:

Ասեց.—Յա՛րաք էս ո՞վ պտի ըլնի, որ սիրու ա արե, էկել ա ըստի:

Գնաց ման էկավ, տեհավ ծառի տակին քնած ա:

Զեն տվեց.—Հողածի՛ն, հողածի՛ն:

Տղեն էդ ձենը լսելու լվեկացավ:

Ասեց.—Ղուշն իրա թեռվը, օ՛ձն իրա պորտովը սիրու շէր-անի գա ըստե, էս ո՞նց ա, որ դու էկել ես:

Տղեն ասեց.—Ընքան մարդկություն էլ շունես, որ համբերես, քնատեղիցս վե կենամ, նո՞ր կոիվ անես:

— Մենծ թիքեդ անգաշդ կթողամ,— ասեց դմը, — հլա խո-սում էլ ե՞ս:

Տղեն վե կալավ, թե.—Մըխելի հեռու կա՛ց, նոր խոսա:

Տղեն վե կացավ, ոտի կաննեց:

Դեն ասեց.— Կուլի նորաթն իմն ա՞, թե քոմը:

Տղեն ասեց.— Թո՛ւնն ա, քցա՛:

Դեղ, որ մի գուրզ քցեց, ընենց մի թող ու դուման էլավ, որ տղեն թողի միջին չէրնաց:

Դեն ասեց.— Իմ կուռը կոտրվի՛, մի քիշ ծանդր տված շըլնեի, մի էրկու մենծ թիքա մնացած ըլներ՝ ուտեի:

Տղեն ասեց.— Հմի նորաթը ի՛մն ա, դու հենց գիտաս ես մեռել եմ:

Տղեն քաշեց դագանակը մի ընենց տվեց դմի շլնքաքոքին, որ զլուսը կտրվեց ու գնա՞ց, հայ էթում ա՞:

Տղեն վել կացավ, դմի ամարաթը ման էկավ, գնաց տեհավ մի օթախի միջի տասը հատ ձի, մարդիկը վրեն ասպարավորված¹ հազիր:

Տղեն ասեց.— Ի՞նչ մարդիկ եք:

Ասեցին.— Մենք դոշաղ մարդիկ ենք, դմը մեզ բերել բռնավոր ա արել. ո՛ր մեզ բրախես, ժամանակին քու հավարին մենք կհասնենք:

Տղեն դմի ձին էլ քաշեց, մի ձեռք թամուզ շոր կապեց, ձիանոնց պոշերից մի-մի մազ քաշեց, քոմմըթին բրախեց: Գնացին: Ինքը խոզերը վել կալավ, էկավ թագավորի տունը: էկավ, տեհավ՝ դափ ու զուռնեն ածում են:

Ասեց.— Էս ի՞նչ խարար ա:

Ասին.— Թագավորն իրա աղջիկը տալիս ա էդ նոր էկած թագավորի տղին:

Տարավ խոզերն արեց նեքսև, գնաց իրա տեղը նստեց:

Թագավորի պումուր աղջիկն էկավ, բարև տվեց, ասեց.— Բա՛րև քեզ:

Ասեց.— Ա՛սսու բարին, ի՞նչ կա:

Ասեց.— Էկել եմ քեզ հետ մի քիշ խոսամ:

Ասեց.— Ես խոզարած մարդ եմ, ինձ հետ ի՞նչ պտի խոսաս, խոզերի ֆո՞տին ես կարոտ, թո՛ղ գնա:

Ասեց.— Իմ սիրտն ուզում ա քեզ հետ մի քիշ խոսամ:

Ասեց.— Գնա՞՛, գնա՞՛, գնա՞՛, հարկավոր շես:

Աղջիկը լաց էլավ գնաց, համա ուշըմիտքը դպա տղեն էր: Գնաց հաց շինեց, վել կալավ էկավ, դուռը թըխկթըխկացըեց:

¹ Զինված (Ս. թ.):

*Տղեն վե կացավ, դուռը բաց արեց, տեհավ էլի թագավորի աղ-
շիկն ա, ասեց.—Ի՞նչ ա:*

*Ասեց.—Հաց եմ բերե, դուռը բաց արա՛, իրար հետ ուտենք:
Հացն առավ ձեռիցը, իրան բրթեց, դուռը շինեց:*

*Աղջիկը վեր ընկավ, վե կացավ, լաց ըլնելով գնաց:
Էզսի օրը էլի վե կացավ, էկավ բալկոնի ճաղերին՝ թըրը՝խկ,*

թըրը՝խկ, ավեց:

— Ի՞նչ ա, ա՛յ մարդ:

— Մի շահի տվե՛ք, էթամ պոպոք առնեմ:

*Մի շահին տվին, գնաց: Իրիկունը ո՛ր ետ գառավ, տեհավ սար
քաղաքը սուզ ա անում:*

Հարցրեց.—Էս ի՞նչ ա պատահե:

*Ասեցին.—Դևերն էկել են, ուզում են թագավորի մենծ աղջը-
կանը տանեն, թագավորը զորքը հավաքում ա, էթա կոփիվ անի:*

*Տղեն խոզերն արեց նեքսե, տեհավ թագավորի պոմուր աղ-
շիկը էկավ մտավ նեքսե, շատ լաց էլավ:*

Տղեն ասեց.—Խի՞ ես լաց ըլնում:

Ասեց.—Ջանս դուս զա՛, քվորս տանում են դևերը:

— Բա դու խի՞ էս էկե հմի:

— Էկել եմ քեզ խնդրվեմ, որ իմ քվորը էթաս ազատես:

*— Ես,— ասեց,— խոզարած մարդ եմ, ես անջախ իմ խոզերը
պահեմ, խի՞ շես էթում ձեր փեսին խնդրում, թագավորի տղա ա:*

*Ասեց.—Նրա բանը չի՛: Էդ դադանակը որ քու ձեռին ա, դու
ամեն բան կարաս անի:*

*Խոզարածը բրթեց աղջիկանը, թե.—Գնա՛, գնա՛, գլուխս մի՛
տանի:*

Աղջիկը լաց ըլնելով գնաց:

*Առավոտը վե կացավ, դագանակը դրեց ուսին, գնաց բալկո-
նը, թըրը՝խկ, թըրը՝խկ:*

*Ընդրանք լալիս են, մղկըտում, թե. Շներն էկե՛լ են, ի՞նչ
պտի անենք, սա թե. Ճիմ շահին տվե՛ք, ես վռազ եմ, խոզերը
մնացին տանը:*

*Մի շահի տվեցին, գնաց պոպոք առավ, խոզերը վե կալավ
գնաց: Տարավ խոզերը հանդումը բրախեց, ծոցիցը Սև դմի ձիա-
նոնց մազերը հանեց, կրակեց, տեհավ դմի ձին, տասը ձիավորի՝
հետ էկան: Դմի ձիու վրի շորերը վե կալավ հագավ, նիլլավ ձին,
քշեցին:*

Թագավորը իրա զոշունը առել էր, դուս էկել դմերի աղաքը, հեռվանց տասնըմին ձիավոր էկան, իրանց առաջովը տվեցին շափարխանի¹, գնացին: Գնացին հասան դմերի դոշնին, տվին, էդ դմերին, ընենց շարդեցին, որ դմերից մնաց մի ֆոզի, էն էլ տղեն բռնեց, ատամները քաշեց, տվեց ճակատին, ասեց.— Գնա՛ քու տիրոնչը խաբար տա՛ր:

Ետով ձիանոնց գլուխը եղ դարձրին ու եղ գնացին:

Թագավորը ձեն տվեց զոշունին.— Բռնե՛ք, հա բռնե՛ք, բռնե՛ք, մի փեշքաշ տանք,— ձիավորները փախան, գնացին:

Տղեն վեր էկավ ձիուցը, շորերը փոխեց, ձիավորներին բրախեց, խոզերը վե կալավ, էկավ դպա տուն: Տեհավ սաղ քաղաքը քեֆի մեջ ա, դափ ու զունեն ածում ա, հա՛ ածում: Ինքը գնաց, քաշվեց իրա խոզանոցը:

Թագավորի պուճուր աղջիկը մի լավ խոնչա շինեց, առավ գնաց Խոզաբածի կուշտը:

Տղեն դուրը բաց արեց, ասեց.— Հը՛, ի՞նչ կա ա՛ղջի:

Ասեց.— Ես քու կարոտը քաշում եմ, հաց եմ բերե, որ իրար հետ ուտենք:

— Զէ՛, չէ՛, հարկավոր չի, գնա՛ բանիդ,— ասեց տղեն, — խոնչեն ձեռիցն առավ ու իրան բրթեց դուս, դուրը շինեց:

Աղջիկը լաց ըլնելոն գնաց տուն:

Տղեն առավոտը վե կացավ, իրա շահին առավ, պոպոքը լցրեց շերը, քշեց խոզերը, գնաց դուս էկավ Կարմիր դմի սահմանը:

Տեհավ մի դարվազա, ասեց. ուրենում ա՝ էս էլ ա դմի տուն, տանեմ խոզերս մի կուշտ ուտացնեմ:

Հասավ դարվազի կուշտը, էրկու դագանակ տվեց, դուան ամեն մի կտորը ընկավ Հալեպ ու Զինիմալին:

Խոզերը քշեց նեքսե, տեհավ բոստան ա, ասեց.— Էս լավ էլավ, թո՛ղ մի կուշտ ուտեն:

Ինքը գնաց մի մենժ ծառի շվաքում պառկեց:

Ճաշվա դեմը Կարմիր դմն էկավ դպա տուն, տեհավ դարվազեն շարդված ա՝ արինը գլուխը տվեց. մտավ նեքսե, տեհավ խոզերը բոստանը քանդուտում են, բարկացած դես ու դեն ընկավ, տեհավ տղեն ծառի տակին քնած ա, ձեն տվեց.— Հողածի՛ն, հողածի՛ն, վե կա՛ց:

¹ Արագ (Ս. Բ.):

Տղեն զարթնեց, տեհավ Կարմիր դեր զվասպիրես կաննած աւ—
— Ի՞նչ ես ախմախի պես էկե զվասպիրես կաննել, չե՞ս
թողում քննեմ, գինչանամ:

Դեն ասեց.— Մենծ թիքեդ անկաջդ կթողամ, ի՞նչքան ինձ
վնաս ես տվել, հմի էլ բերան ունես ըտենց խոսալու: Ղուշն իրա
թեռվը, օձն իրա պորտովը շէր սիրտ արե գալ ըստեղ, դու ո՞նց
ես էկե, հլա բարկանում էլ էս վրի՞ս: Ատամներս եռ ու քոր ա
գալի, քու մենծ թիքեն կթողամ անկաջդ:

Տղեն զագանակն առավ ու վե կացավ կաննեց. զմին ասեց.—
Նորաթը քո՞ւն ա, կովա՛:

Դեր մի գուրդ քցեց դրան. թոզ ու դումանը վե կացավ, տղեն
միշին շէրևաց:

Դեն ասեց.— Ափսո՞ս, մի կտոր էլ ա շմնաց, ուտեի:
Երոր թողը մկսեց բարակիլը, տղեն ասեց.— Նորաթն ի՞մն
ա:— Տարավ բերեց զագանակը ո՞ր շտվեց շնքաքորին, զլովսը
պոկվեց ու գնաց. գնաց, դիպավ Մասսա սարին, Մասիսը տեղիցը
ժաժ էկավ!

Տղեն վե կացավ էդ զմի ամարաթի մեջ ման էկավ, տեհավ
մի օթախ, տասը ձիավոր միշին հաղիր կաննած:

Ասեց.— Ի՞նչ մարդ եք:

Ասեցին.— Բոնավոր ենք, Կարմիր դեն ա բերե. մեզ բաց
թո՞զ, մենք քու հավարին կհասնենք:

Տղեն գնաց Կարմիր զմի Կարմիր ձին էլ բերեց, մի թամուզ
կարմիր շոր վրեն կապեց, էդ ձիանքը ունց պուշերիցը քաշեց, բի-
րադնին բրախեց: Եդ դառավ, խոզերը վե կալավ, էկավ տուն:

Էկավ տեհավ սաղ քաղաքը քեֆի մեջ ա, ուրախություն էն
անում:

Խոզերը տարավ տուն, թագավորի պումուր աղջիկն էկավ
կուշտը, ասեց.— Վե՛, է՛թանք իմ օթախը, միշնեկ քվորս նշան-
դրեքն ա, սաղ քաղաքը ուտում, խմում ա, ի՞նչ ա, դու ըստեղ
վեր էս ընկե:

Տղեն ասեց.— Գնա՛, գնա՛, ես ձեր լայաղին մարդ շեմ, ես
մի խոզարած եմ:

Ասեց.— Ես քեզ սիրում եմ, դու ինձ հմար թագավոր ես:

— Գնա՛, գնա՛, ես շե՞մ գա, — ասեց տղեն, — աղջկանը բըր-
թեց, դուու շինեց:

Աղջիկը գնաց մի լավ խոնչա շինեց, բերեց տղին. ինքը դուռ
ու բաց արեց ու մտավ նեքսև:

Ասեց.—Հաց եմ բերե, վե կա՛ց, իրար հետ ուստենք:

Տղեն խոնչեն առավ ձեռիցը, աղջկանը բրթեց, թե.—էս քու
տեղը չի', դու գնա՛:

Առավոտը վե կացավ, էլի թըրը՝խկ, թըրը՝խկ.—Իմ շահին
տվե՛ք, պոպոք առնեմ,— ասեց:

Պոպոքն առավ գնաց: Իրիկունը էկավ, տեհավ որ սաղ քա-
ղաքը էլի սուզ ա անում:

Հարցրեց, թե.—Էս ի՞նչ խարար ա:

Ասեցին.—Առավոտը դմերը պտի գան, որ թագավորի միջ-
նեկ աղջկանը տանեն:

Խոզերը բերեց տուն. թագավորի պուճուր աղջիկը լաց ըլնե-
լով էկավ մտավ նեքսն, ասեց.—Վերև աստված, ներքեւ դու, ես
գիտամ, որ իմ մենծ քվորը դու աղատեցիր, իմ միջնեկ քվորն էլ
աղատա՛:

Ասեց.—Գնա՛, գնա՛, ձեր թագավորի տղին, վեզրի տղին
ասա՛, էթան ազատեն, ես մի խոզարած եմ, ես ի՞նչ կարամ անի:

Ասեց.—Չէ՛, նրանց քանը չի', ազատես՝ դու կազատես:

Տղեն վե կացավ, կոնիցը բռնեց, քցեց դուռը, աղջիկը լաց
ըլնելով գնաց:

Առավոտը վե կացավ, խոզերը վե կալավ գնաց հանդը, մա-
զերը կրակին տվեց, Կարմիր դմի ձին, մեկ էլ քսան ձիավորն էկան:
Հագավ կարմիր շորերը, նիլլավ ձին ու քշեց գնաց:

Թագավորը մտիկ տվեց տեհավ, որ մի թող ա քանձրացել,
ասեց.—Աշքներդ լի՛ս, հրես գալիս են, մեղ կազատեն:

Երոր մոտացան, թագավորի ձեռ ու ոտը ուրախությունիցն
իրար խառնվեց:—Տղե՛ք, ճամփա՛ տվեք:

Կրակի պես քշելով էկան անց կացան, ընկան դմերի վրեն,
չարդ ու խուրդ արեցին:

Բիրադնին շարդեցին, մնաց մի հոգի. տղեն բռնեց, անկաջ-
ները կա՛րեց, ասեց.—Դե գնա՛, խարար տա՛ր:

Զիավորները եղ դառան, թագավորը ձեն տվեց դոշընին.—
Բռնե՛ք, հա, բռնե՛ք, ընդրանց փեշքաշ տա՛նք:

Ընդրանք ձիանիքը շափարխանի քշեցին գնացին:

Թագավորն ասեց.—Վե՛յ, չէլա՛վ, մի՛ բռնեինք տենայինք՝
ըդոնք ի՞նչ մարդիկ ին:

Իրիկոմը որ տղեն գալիս ա տուն, տենում ա սաղ քաղաքը
թնդում ա, քե՛ֆ, ուրախություն էն անում: Ինքը գալիս ա իրա
խոզանոցը, նստում:

Թագավորի պումուր աղջիկը վեր ա կենում, վազելով գալիս
դրա կուշտը, ասում ա.—Վե՛ կաց, է՛թանք իմ օթախը, ուտե՛նք,
խմե՛նք, քեֆ անենեք, տենում ես՝ սաղ քաղաքը ուտում, խմում,
քեֆ ա անում:

Տղեն ասում ա.—Ես խոզարած մարդ, ես ի՞նչ գործ ունեմ
ձեր օթախումը, վե կաց գնա՛, վե՛ կաց:

Աղջիկն ասում ա.—Իմ սրտի սիրականը դու ես, ի՞նչ ես կեղ-
տոտ տեղը նստե, վե՛ կաց, վե՛ կաց, է՛թանք:

— Զէ՛, չէ՛, ես մի խոզարած մարդ եմ, ձեզ չեմ սազի:

Աղջիկը վե կացավ, փոր ու փոշման գնաց:

Գնաց, մի լավ խոնչա հազրեց, վե կալավ բերեց, ասեց.—
Չես գալիս, չե՛ս, ըտեղ էլ ա նստենք իրար հետ հաց ուտենք:

Տղեն ասեց.—Վե՛ր, վե՛ր, վեր գնա՛, էս ֆուտին դու չես կա-
րա հաց ուտի:

— Քո՛ւ կշտին ըլնեմ, ջայնա՛մ թե ֆուտ կգա:

Տղեն վե կացավ, կուռը բռնեց.—Դե գնա՛, գնա՛,— ասեց,—
աղջկանը քցեց դուրը՝ գուրը եդ արեց: Աղջիկը լաց ըլնելով գնաց:

Առավոտը տղեն էլի վե կացավ, խոզերին վե կալավ գնաց:
Գնաց, հասավ Սիափտակ դեփ սահմանը, տեհավ մի դարվազա,
ասեց.—Կարող ա է՛ս էլ դեփ տուն ըլնի:

Քշեց, գնաց: Գնաց հասավ դարվազին, տեհավ շինած ա, էդ իրա
քսանհինդ փթանոց դագանակովը ո՛ր մի անզամ տվեց, դուռ-մուռ
էլ չէրևաց: Խոզերը արեց նեքսե, տեհավ եմիշ, ձմերուկ, ամե՛ն
բան կա: Խոզերը բրախեց, ինքը գնաց աղբրի վրա լվացվեց,
ծառի տակին պառկեց, քնեց: Ճաշվա վախտը Սիափտակ դեմ էկավ
տեհավ՝ դարվազեն շարդված ա. սրտի հերսիցը գլխի դուլը ժաժ
էկավ:

Մտավ նեքսե, տեհավ խոզերը ընենց են քանդրտում, ուտում,
ո՛ր պրծար. ման էկավ տեհավ՝ մի մարդ ծառի տակին պառկած
ա, ձեն տվեց:— Հողածի՛ն, հողածի՛ն, վե՛ր, — ասեց, ու ոտը տվեց
գեննին՝ ժաժ էկավ:

Տղեն դարթնեց, ասեց.— Ի՞նչ էլավ քեզ, չիր կարա մի քիչ
համփերի՝, քնեի, դինջանալի:

— Օխուը տարի ա՝ իսանի միս չեմ կերե, ատամներս եռքբոր
ա գալի, շատ մի խոսա՛, վե՛ կաց, քու մենծ թիքեն թողամ ան-
կաջդ:

Տղեն դագանակն առավ կաննեց, ասեց.— Նորաթը քումն ա,
տո՛ւ:

Սիպտակ դմը եդ կաննեց ու մի գուղզ քցեց, ընե՞նց մի թոզ ու
դրաման էլավ, որ տղեն միշին կորավլ:

Դևն ասեց.— Գնաց գեննի տակը, մի կտոր էլ ա շմնաց՝
ուտեի:

Երոր թողը քաշվեց, տղեն ասեց.— Ի՞նչ շատ էս պարծենում,
ես տեղս կաննած եմ, դե հմի դու տես, նորաթն իմն ա:

Ասեց, դագանակը պըտղտեց ու մի դըրը տվեց շըլընքաքո-
քին:

Դևն ասեց.— Մին էլ տո՛ւ

Տղեն ասեց.— Մորիցս մեկ եմ էլե, իմ գըրբը մեկ ա:

Դմի զլուխը պոկվեց ու գնաց, հլա էթում ա:

Տղեն մտավ դմի ամարաթը, տեհավ տասը սիպտակ ձիավոր,
ասեց.— Ի՞նչ մարդ եք դուք:

Ասեցին.— Մենք բռնավոր ենք, Սիպտակ դմը մեզ բերել ա
ըստեղ բռնել ա. մեզ բաց թո՛զ, ինչ նեղությունի մեշ ըլնես՝ մենք
կազատենք քեզ:

Գնաց Սիպտակ դմի ձին էլ բերեց. մի ձեռք սիպտակ շոր ջո-
կեց ձիու վրին կապեց, ձիանքանց պոշերիցը մի-մին մազ քաշեց,
դրեց ծոցը, ըտրանց բրախեց: Եդ դառավլ, խոզերը քշեց, էկավ
տուն:

Թագավորի պուճուր աղջիկն էլի վազելով էկավ, ասեց.—
Վե՛ր, էթանք մեր օթախը:

Ասեց.— Խոսքը մի՛ հետ կասեն, չե՛մ գալի, ես մի խոզարած
մարդ, դու թագավորի աղջիկ, ո՞նց կսազենք:

Ասեց.— Ես էլ քե՛զ դուրբան, իմ հերն էլ քե՛զ դուրբան, իմ
մերն էլ քե՛զ դուրբան, դու ինձ հմար աշխարթի բարեբար ես:

— Գնա՛, գնա՛, զլուխս մի՛ տանի, — թևիցը բռնեց, տանիցը
դուս արեց ու դուռը եդ արեց:

Աղջիկը լաց ըլնելով թողաց, գնաց:

Գնաց, մի լավ խոնչա շինեց բերեց, ասեց.—Ա'րի իրար հետ
նստենք, ուստենք:

Ասեց.—էդ զի՛ ըստեղ, դու վի կաց գնա՛:

Աղջիկն ասեց.—Սըպանես էլ, չե՛մ էթա՛:

Վե կացավ, աղջկա կռնիցը բռնեց, քցեց դուռը:

Առավոտը էլի խողերը առավ, գնաց հանդը, մնաց ընչանք
իրիկուն, իրիկունը եղ դառավ էկավ, էկավ տեհավ վա՛յ-վա՛յը
դրել են քաղաքի մեջը:

Էկավ խողանոցը, թագավորի պուճուր աղջիկը լաց ըլնելով
էկավ, դուռը բաց արեց ու ընկավ տղի ոնները, ասեց.—Ո՞նց որ
ազատեցիր իմ էրկու քվորը, ինձ էլ պտի ազատես, հմի էլ դևրը
էկել են ինձ տանելու:

Տղեն ասեց.—Տանում են՝ տանեն, ե՞ս ինչ անեմ:

Աղջիկն ասեց.—Ես քու գլխին զո՛ւրան, ոնց որ քվորտանցս
ազատեցիր, ի՞նձ էլ կազատես:

Ասեց.—Գնա՛ քու բանին, իմ ձեռիցը բան չի դա, ես խողա-
րած մարդ եմ, ես գիտամ՝ իմ խողերը, գնա՛, թագավորի տղին,
վեզրի տղին կազատի քեզ:

— Ա'յ ֆողեմ նրանց գլուխը, նրանց ձեռիցը ի՞նչ կդա:

Տղեն վե կացավ, աղջկա կռնիցը բռնեց, ասեց.—Գնա՛, գնա՛:

Աղջիկը վե կացավ, լաց ըլնելով գնաց: Գնաց մի խոնչա հաց
հազրեց, առավ էկավ:

Ասեց.—Էլի էկա՛ր, քու էրեսը բոշի էրե՞ս ա:

Ասեց.—Հաց եմ բերե, քեզ սոված հո՛ չի թողա: Նստի՛, իրար
հետ ուստենք:

Տղեն նստեց: Աղջիկը մի յանիցը ուստում էր, մի յանիցը աշքը
քցում տղին՝ լաց ըլնում:

Տղեն ասեց.—Խի՞ ես լաց ըլնում:

Ասեց.—Զանս դուս գա, լաց կըլնեմ, բա չե՛մ ըլնի, առա-
վոտը դևրը ինձ պտի տանեն:

— Ոնց որ քվորտանցդ տարա՞ն:

— Քվորտանցս ազատեցիր, ինձ չես ազատի:

Ասեց.—Քե՛զ էլ կազատեմ, համա մարդի բան շասես:

Գնաց, տեհավ մերը իրա օթախումն ա:

Մերը տեհավ, որ ախշիկը ծիծաղում ա, ասեց.—Ի՞նչ ա պա-
տահել, առավոտը դևրը քեզ պտի տանեն, դու ծիծաղում ես:

Ասեց.— ԱՇ ՄԵՐ, իմ քվորտանց աղատողը ինձ էլ կազատի։
Ասեց.— Բախտավոր ես, քե՞զ էլ կազատեն։

— Ինձ խոսք տվեց։

— Ո՞վ։

— Իմ քվորտանցը աղատողը։

— Մի ասա՛, տենանք ո՞վ ա։

— Մարդի բան չես ասի՞։

— Չէ՛։

— ՄԵՐ ԽՈՂԱՐԱԺԸ։

— ԽՆՀ ա ասում։

— Ա՛ՄՏՎԱԾ ՎԿԱ։

— Բա էթանք ես էլ խնդրվեմ։

Ասեց.— Որ իմանա թե քեզ ասել եմ, ինձ էլ կսըպանի, քեզ էլ։
Էգսի առավոտը թագավորը իրա զոշոնը հավաքեց, գնաց գե-
վերի աղաքը կաննեց, համա շատ երկուլ էր անում, հրոպակ-
հրոպակ թամաշ էր անում, թե էն սարիցը ձիավորներ գալիս են,
թե չէ։ Մըն էլ տեհավ մի սիպտակ ձիավոր եռեսուն ձիավորների
հետ էկավ։

— Տղե՞ք, աշքներդ լի՛ս, — ասեց, — ճա՛մփա, ճա՛մփա, ճամ-
փա բա՛ց արեք։

Ճամփա տվին, ձիավորներն էկան անցան, ընկան դմերի վրա,
բշի, ճա՛բշի, տուր ճա՛տուր, ջարդա ճա՛ջարդա, ընենց ջարդե-
ցին, մնաց մի հոգի։

Ձիավորը բռնեց անկաշները կտրեց, պինը կտրեց, ասեց.—
Դե՛ դնա, խարար տա՛ր։

Եղ դառան։ Թագավորը իրա զոշընին ասեց.— Ընենց արե՞ք,
որ կարենաք բռնի։

Ձիավորները ո՛ր մոտացան թագավորին, տղեն ասեց.— Դուք
բշեք, գնացեք, ինձ բռնում են, թող բռնեն։

Ձիավորները քշեցին գնացին։ Տղեն հանեց դանակը, բիլակը
մի քիչ արևացրեց, կամաց քշելով գնաց։ Էկան տղին բռնեցին,
տարան թագավորի մոտը։

Թագավորը վազեց, տղի ձիու ճակատը պաշեց, կռացրեց տղի
ճակատն էլ պաշեց, ասեց.— Իմ թագավորությունը քեզ զուրբան։

Տեհավ կոիցը արին ա գալի, այլովսը չերիցը հանեց, կապեց
կոտը, հենց որ կապեց, տղեն ձիու էրկու օրգանդու տվեց՝ թուավ
գնաց։

Տղեն ձին բրախսեց, խոզերն առավ, էկավ տում: էկավ տում,
տեհավ դափ ու զուռնա, շրաղղան, ուտի՛ւ, խմի՛ւ, քեֆ անի՛ւ:
Թագավորի պուճուր աղջկը մի լավ խոնչա շինեց, վե կալավ
էկավ, նստեցին, իրար հետ անուշ արեցին:

Թագավորը կնկանը պատմեց, թե մի սիապտակ ձիավոր եռե-
սուն ձիավորով էկավ դներին շարդեց, էդ ձիավորին բռնեցին, կու-
ռը յարալու էր էլե, իրա ալլովսը հանչա, կապեց. կապեց, ուզում
էր բերի տուն, ձիուն օրգանգվով տվեց՝ փախավ:

Թագավորի կնիկը ծիծաղում ա:

Թագավորը հարցնում ա.—Ի՞նչ ես ծիծաղում:

Ասում ա.—Քու ասած ձիավորը մեր Խոզարածն ա:

— Ի՞նչ ա ասում:

— Դրուստ եմ ասում, առավոտը կանչա', հարցրա' :

Թագավորը զրկեց էն հրոպակին կանչեց, տեհավ թեր կա-
պած ա, քանդեց՝ տեհավ իրա ալլովսը, ասեց.—Էս ի՞նչ բան ա:

Ասեց.—Երոր թագավորի տղեն կըլնի խոզարած, վեզրի տղեն
կըլնի թագավորի տղա, պարզ բան ա թագավորի տղեն իրան կտա
գժութունի: Չես հավատում՝ կանչա քու թագավորի տղին, տե՛ս
իմ բազմանդը նրա կոփին ա՝, թե չէ:

Թագավորը կանչում ա փեսին, տենում ա, որ կոան բազման-
դը դրանն ա, ձեռաց ձեն ա տալի:— Զանլա՛թ:

Զանլաթները գալիս են, զլովսը կտրում:

Բազմանդը հանըմ ա տալիս տղին, ասում.— Իմ պուճուր աղ-
շիկն էլ քե՛զ փեշբաշ:

Օխտն օր, օխտը զշեր հարսանիք են անում, պսակում: Մի
հինգ օրից եղը կնկանը առնում ա՝ էթում ա իրա երկիրը, տենում
ա հերը մեռած ա ըլնում, ինքը նստում ա թագավոր:

Նրանք հասան իրանց մուրազին, ինչ մարդ էլ կարոտ ա՝ հաս-
նի իրա մուրազին:

Ասսանից իրեք խնձոր ընկավ, մինն՝ ասողին, մինը՝ լսողին,
մինն էլ՝ անկաջ զնողին:

